ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

0078 Երևան, Հալաբյան 41ա, Հեռ.՝ 010 594 192
Էլ. հասցե՝ hayrapetyan.gevorg@moj.am

Վարչական վարույթ. գործ N-054/08/19

ՈՐՈՇՈՒՄ

«Դատաբժշկական գիտագործնական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ՀՀ առողջապահության նախարարության դատաբժշկական գիտագործնական կենտրոնի Շիրակի մարզի դատաբժշկական փորձաքննությունների բաժնի 2014 չորրորդ եռամսյակի (հոկտեմբերի 1-ից-դեկտեմբերի 31-ը) հաստիքացուցակը եւ այդ հաստիքներում ներգրավված (աշխատող) անձանց անվանացանկը հրապարակելու (հարցման հիման վրա տրամադրելու) դեպքում անձնական տվյալների մշակման համապատասխանությունն «Անձնական տվյալների պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին ստուգելու վերաբերյալ

19.09.2019թ. *ք. Երևան*

ՀՀ արդարադատության նախարարության Անձնական տվյալների պաշտպանության գործակալության (այսուհետ նաեւ Անձնական տվյալների պաշտպանության գործակալություն, Գործակալություն) պետ Գեւորգ Հայրապետյանս՝ ուսումնասիրելով «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության (այսուհետ նաեւ՝ ՀԿ) նախագահ Շուշան Դոյդոյանի կողմից 2019 թվականի օգոստոսի 5-ին Գործակալությանը հասցեագրված (2019 թվականի օգոստոսի 8-ին ստացված) դիմումի առիթով Անձնական տվյալների պաշտպանության գործակալության նախաձեռնությամբ 2019 թվականի օգոստոսի 8-ին հարուցված N-054/08/19 վարչական վարույթի նյութերը.

ՊԱՐԶԵՑԻ

1. **Գործի նախապատմությունը.**

1.1. «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության (այսուհետ նաեւ՝ ԻԱԿ, ՀԿ) նախագահ Շուշան Դոյդոյանը հայտնել է, որ ՀԿ-ն տեղեկություն ստանալու նպատակով 2019 թվականի մարտի 1-ին դիմել էր «Դատաբժշկական գիտագործնական կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ նաեւ՝ ՊՈԱԿ)՝ խնդրելով տրամադրել ՀՀ առողջապահության նախարարության դատաբժշկական գիտագործնական կենտրոնի Շիրակի մարզի դատաբժշկական փորձաքննությունների բաժնի 2014 չորրորդ եռամսյակի (հոկտեմբերի 1-ից-դեկտեմբերի 31-ը) հաստիքացուցակը եւ այդ հաստիքներում ներգրավված անձանց անվանացանկը:

1.2. ՀԿ-ի նախագահը նաեւ հայտնել է, որ ՊՈԱԿ-ը 2019 թվականի մարտի 5-ի պաշտոնական գրությամբ մերժել էր տրամադրել տեղեկությունը՝ նշելով, թե պահանջվող տեղեկությունը աշխատողի անձնական տվյալներ են, եւ ՊՈԱԿ-ը իրավասու չէ փոխանցել այն ՝ առանց աշխատողի գրավոր համաձայնության:

1.3. Շուշան Դոյդոյանը նշել է, որ Ինֆորմացիայի ազատության կենտրոնը 2019 թվականի հունիսի 17-ին կրկնակի հարցմամբ էր դիմել ՊՈԱԿ-ին, հայտնել, որ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ տեղեկատվություն տնօրինողը տարին առնվազն մեկ անգամ հրապարակում է հաստիքացուցակները, ինչպես նաեւ պաշտոնատար անձանց անունները, ազգանունները, կրթությունը, մասնագիտությունը, պաշտոնը, աշխատանքի վայրի հեռախոսային համարները, էլեկտրոնային փոստի հասցեները, ուստի, ԻԱԿ-ի կողմից փնտրվող տեղեկությունը արդեն իսկ հրապարակված է եղել դեռեւս 2014 թվականին, իսկ հրապարակված տեղեկությունը մեկ անգամ եւս տրամադրելու համար լրացուցիչ համաձայնության կարիք չկա, եւ եւս մեկ անգամ խնդրել տրամադրել ՀՀ առողջապահության նախարարության դատաբժշկական գիտագործնական կենտրոնի Շիրակի մարզի դատաբժշկական փորձաքննությունների բաժնի 2014 չորրորդ եռամսյակի (հոկտեմբերի 1-ից-դեկտեմբերի 31-ը) հաստիքացուցակը եւ այդ հաստիքներում ներգրավված անձանց անվանացանկը:

1.4. ՀԿ-ի նախագահը նաեւ նշել է, որ 2019 թվականի հունիսի 17-ի գրությամբ ՊՈԱԿ-ը նույն հիմնավորմամբ կրկին մերժել է պահանջված տեղեկության տրամադրումը՝ համարելով, որ ՊՈԱԿ-ը պատկանում է «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 6-րդ կետում նշված կազմակերպությունների ցանկին եւ չի հրապարակում նշված տեղեկությունները:

1.5. ՀԿ-ի նախագահը գտել է, որ ՊՈԱԿ-ը պետական հիմնարկ (կազմակերպություն) է, այլ ոչ թե բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպություն, ուստի, ԻԱԿ-ի պահանջած տեղեկությունները պետք է տրամադրվեին, քանի որ նախատեսված են օրենքով՝ մասնավորապես, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ կետի 4-րդ ենթակետով:

1.6. Վերոնշյալը հաշվի առնելով՝ ՀԿ-ն խնդրել է Գործակալությանը պարզել՝ արդյոք ՀՀ առողջապահության նախարարության դատաբժշկական գիտագործնական կենտրոնի Շիրակի մարզի դատաբժշկական փորձաքննությունների բաժնի 2014 չորրորդ եռամսյակի (հոկտեմբերի 1-ից-դեկտեմբերի 31-ը) հաստիքացուցակը եւ այդ հաստիքներում ներգրավված անձանց անվանացանկը հրապարակելը հակասում է «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ անձնական տվյալների մշակման սկզբունքներին:

2. <u>Վարույթի հիմքերը եւ հիմնավորումները.</u>

Գործակալության նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթը կատարվում է հետևյալ հիմքի սահմաններում և ներքոհիշյալ հիմնավորումներով.

2.1. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «1. Վարչական վարույթ հարուցելու հիմքերն են՝ ա) անձի դիմումը, բողոքը. բ) վարչական մարմնի նախաձեռնությունը»: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ վարչական մարմնի նախաձեռնությամբ «... վարչական վարույթը հարուցվում է այն գործողության (գործողությունների) սկսման օրվանից, որը նպատակամղված է վարչական մարմնի նախաձեռնությամբ վարչական ակտի ընդունմանը»:

2.2. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի համաձայն՝ «Վարչական մարմնի նախաձեռնությամբ վարչական վարույթ հարուցելու հիմքերն են՝ վարչական ակտ ընդունելու վերաբերյալ օրենքի պահանջը, դրանից բխող անհրաժեշտությունը կամ օրենքով վարչական մարմնին վերապահված հայեցողական լիազորությունը»:

2.3. ՀՀ ԱՆ Անձնական տվյալների պաշտպանության գործակալությունը ՀՀ կառավարության՝ 2015թ.-ի հուլիսի 2-ի 734-Ն որոշմամբ ճանաչվել է «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքով (այսուհետ նաեւ՝ Օրենք) նախատեսված լիազոր մարմին:

2.4. «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ «Անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմինը՝ 1) ստուգում է իր նախաձեռնությամբ կամ համապատասխան դիմումի հիման վրա անձնական տվյալների մշակման համապատասխանությունը սույն օրենքի պահանջներին»:

2.5. Նույն հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ «Անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմինը՝ ... 3) պահանջում է արգելափակել, կասեցնել կամ դադարեցնել սույն օրենքի պահանջները խախտող անձնական տվյալների մշակումը»,

2.6. Նույն մասի 4-րդ կետի համաձայն՝՝ « … 4) օրենքով նախատեսված հիմքերի առկայության դեպքում մշակողից պահանջում է անձնական տվյալների ուղղում, փոփոխում, ուղեփակում կամ ոչնչացում»:

2.7. Նույն մասի 12-րդ կետի համաձայն՝ «Անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմինը՝ … 12) ապահովում է տվյալների սուբյեկտի իրավունքների պաշտպանությունը»:

2.8. Անձնական տվյալների պաշտպանության գործակալությունը հիմնվել է նաեւ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ եւ 34-րդ հոդվածների իրավակարգավորումների վրա:

2.9. Սույն վարույթը կատարվում է՝ հիմնվելով ՀՀ Սահմանադրության 34-րդ հոդվածով նախատեսված՝ անձնական տվյալների պաշտպանության իրավունքի եւ այդ իրավունքն առարկայացնող «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի կարգավորումների վրա, մասնավորապես՝ Օրենքի 4-րդ հոդվածով սահմանված օրինականության, ինչպես նաեւ Օրենքի 5-րդ հոդվածով սահմանված համաչափության սկզբունքների վրա:

2.10. Սույն վարույթով որոշում կայացնելիս Գործակալությունը նաեւ հաշվի է առել ՀՀ աշխատանքային օրենսգրքի, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի, «Պետական ոչ առեւտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» ՀՀ օրենքի վերաբերելի կագավորումները եւ վերաբերելի դոկտրինալ մոտեցումները:

3. <u>Վարույթի համար նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն վարչական վարույթի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

3.1. «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունը 2019 թվականի մարտի 1 թվագրված տեղեկություն ստանալու թիվ 341-67 հարցմամբ (այսուհետ նաեւ՝ Հարցում) դիմել է «Դատաբժշկական գիտագործնական կենտրոն» ՊՈԱԿ-ին: Հարցմամբ ՀԿ-ն հղում է արել ՀՀ Սահմանադրության 42-րդ եւ 51-րդ հոդվածներին եւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածին եւ խնդրել է «(…) տրամադրել ՀՀ առողջապահության նախարարության դատաբժշկական գիտագործնական կենտրոնի Շիրակի մարզի դատաբժշկական փորձաքննությունների բաժնի 2014 չորրորդ եռամսյակի (հոկտեմբերի 1-ից-դեկտեմբերի 31-ը) հաստիքացուցակը եւ այդ հաստիքներում ներգրավված անձանց անվանացանկը»:

3.2. ՀԿ-ի Հարցմանն ի պատասխան 2019 թվականի մարտի 5 թվագրված թիվ 15/1 գրությամբ ՊՈԱԿ-ը հղում է արել ՀՀ Սահմանադրության 51-րդ հոդվածի 2-րդ մասին, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 134-րդ հոդվածի 1-ին եւ 5-րդ կետերին եւ հայտնել է. «(…) Այսպիսով Ձեր կողմից ներկայացված տեղեկության

տրամադրումը հնարավոր չէ, քանի որ կան աշխատակիցներ, որոնք ազատվել են աշխատանքից եւ հնարավոր չէ պահպանել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 134-րդ հոդվածի 1-ին կետը, ավելին հարցմամբ չի նշվել նախատեսված բացառությունների մասին եւ չի ներկայացվել ապացույց՝ հատուկ լիազորություններ ունեցող անձ հանդիսանալու մասին»:

3.3. «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունը 2019 թվականի հունիսի 17 թվագրված տեղեկություն ստանալու թիվ 342-46 կրկնակի հարցմամբ (այսուհետ նաեւ՝ Կրկնակի հարցում) դիմել է ՊՈԱԿ-ին: Կրկնակի հարցմամբ ՀԿ-ն վկայակոչել է «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ կետի 4-րդ ենթակետը, նշել, որ ՀԿ-ի կողմից փնտրվող տեղեկությունը արդեն իսկ հրապարակված է եղել դեռեւս 2014 թվականին, իսկ հրապարակված տեղեկությունը մեկ անգամ եւս տրամադրելու համար լրացուցիչ համաձայնության կարիք չկա, եւ եւս մեկ անգամ խնդրել տրամադրել ՀՀ առողջապահության նախարարության դատաբժշկական գիտագործնական կենտրոնի Շիրակի մարզի դատաբժշկական փորձաքննությունների բաժնի 2014 չորրորդ եռամսյակի (հոկտեմբերի 1-ից-դեկտեմբերի 31-ը) հաստիքացուցակը եւ այդ հաստիքներում ներգրավված անձանց անվանացանկը:

3.4. ՊՈԱԿ-ը ՀԿ-ի Կրկնակի հարցմանն ի պատասխան 2019 թվականի հունիսի 17 թվագրված թիվ 15/1-197 գրությամբ հայտնել է. «(...) 2014 թվականին ՀՀ ԱՆ «Դատաբժշկական գիտագործնական կենտրոն» ՊՈԱԿ-ի հաստիքացուցակը, պաշտոնատար անձանց անունները, ազգանունները, կրթությունը, մասնագիտությունը, պաշտոնը, աշխատանքի վայրի հեռախոսային համարները, էլեկտրոնային փոստի հասցեները չեն հրապարակվել»: Բացի այդ, ՊՈԱԿ-ը վկայակոչել է «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 6-րդ կետը եւ նշել. «(...) Այսպիսով ՀՀ ԱՆ «Դատաբժշկական գիտագործնական կենտրոն» ՊՈԱԿ-ը պատկանում է վերը նշված հոդվածի 6-րդ կետում նշված կազմակերպությունների ցանկին, չի հրապարակում նշված տեղեկատվությունը, հետեւաբար Ձեր կողմից պահանջվելիք տեղեկատվության տրամադրումը կրկին մերժվում է, որի վերաբերյալ հիմնավորումները արդեն իսկ ներկայացվել են նախորդ գրությամբ»:

3.5. «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունը 2019 թվականի օգոստոսի 8 թվագրված գրությամբ դիմել է Գործակալությանը՝ խնդրելով պարզել՝ արդյոք ՀՀ առողջապահության նախարարության դատաբժշկական գիտագործնական կենտրոնի Շիրակի մարզի դատաբժշկական փորձաքննությունների բաժնի 2014 չորրորդ եռամսյակի (հոկտեմբերի 1-ից-դեկտեմբերի 31-ը) հաստիքացուցակը եւ այդ հաստիքներում ներգրավված անձանց անվանացանկը հրապարակելը հակասում է «Անձնական

տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ անձնական տվյալների մշակման սկզբունքներին:

3.6. ՀԿ-ի կողմից Գործակալությանը հասցեագրված դիմումը հաշվի առնելով՝ Գործակալությունում 2019 թվականի օգոստոսի 8-ին հարուցվել է վարչական վարույթ՝ ՀՀ ԱՆ «Դատաբժշկական գիտագործնական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ՀՀ առողջապահության նախարարության դատաբժշկական գիտագործնական կենտրոնի Շիրակի մարզի դատաբժշկական փորձաքննությունների բաժնի 2014 չորրորդ եռամսյակի (հոկտեմբերի 1-ից-դեկտեմբերի 31-ը) հաստիքացուցակը եւ այդ հաստիքներում ներգրավված անձանց անվանացանկը հրապարակելու (հարցման հիման վրա տրամադրելու) դեպքում անձնական տվյալների մշակման համապատասխանությունն «Անձնական տվյալների պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին ստուգելու համար:

3.10. Վարչական վարույթի շրջանակներում 2019 թվականի օգոստոսի 16-ին նշանակվել են լսումներ, որոնց վարույթի մասնակիցները չեն ներկայացել:

3.11. 2019 թվականի օգոստոսի 16-ին Գործակալության հետ ունեցած հեռախոսային զրույցի ընթացքում ՊՈԱԿ-ի ներկայացուցիչը հայտնել է, որ լսումների օրվա եւ ժամի վերաբերյալ գրությունը ՊՈԱԿ-ում ստացվել է ավելի ուշ, քան լսումների նշանակված ժամն էր:

3.12. 2019 թվականի օգոստոսի 20-ին նշանակվել են լրացուցիչ լսումներ, որոնց վարույթի մասնակիցները չեն ներկայացել:

3.13. 2019 թվականի սեպտեմբերի 9-ին վարույթը երկարաձգվել է 10 օրով:

4. <u>Պատճառաբանություններ և եզրահանգումներ.</u>

Ուսումնասիրելով վարչական վարույթի նյութերը՝ պարզեցի.

4.1. Սույն վարչական վարույթով անհրաժեշտ է պարզել՝ արդյո՞ք խնդրո առարկա տեղեկություններն անձնական տվյալներ են: «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ անձնական տվյալ է «ֆիզիկական անձին վերաբերող ցանկացած տեղեկություն, որը թույլ է տալիս կամ կարող է թույլ տալ ուղղակի կամ անուղղակի կերպով նույնականացնել անձի ինքնությունը»:

Միաժամանակ, պետք է հաշվի առնել, որ աշխատողների վերաբերյալ տեղեկությունները գտնվում են աշխատող-գործատու հարաբերությունների շրջանակում: Ուստի, անհրաժեշտ է խնդրո առարկա տեղեկությունները դիտարկել նաեւ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 16-րդ գլխով նախատեսված կարգավորումների լույսի ներքո, որոնք վերաբերում են աշխատողների անձնական տվյալների պաշտպանությանը:

Սույն վարույթի շրջանակներում քննարկվում է ՊՈԱԿ-ի հաստիքացուցակը, ինչպես նաեւ այդ հաստիքներում աշխատող անձանց անվանացանկը հրապարակելու կամ տեղեկություն ստանալու հարցման հիման վրա հարցմամբ

դիմողին տրամադրելու հարցը, այսինքն, ի թիվս այլնի նաեւ հաստիքներում աշխատող անձանց ինքնությունը բացահայտելու, նրանց անուններն ու ազգանունները հրապարակելու հարցը:

Հետեւաբար, սույն վարույթի խնդրո առարկա տեղեկություններն անձնական տվյալներ են:

4.2. Միաժամանակ Գործակալությունն ուշադրություն է դարձնում այն հանգամանքին, որ հարցումներով ՀԿ-ն ՊՈԱԿ-ին ներկայացրել է եւ հաստիքացուցակները, եւ այդ հաստիքներում աշխատող անձանց անվանացանկը ստանալու պահանջ:

«Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով նախատեսված «անձնական տվյալ» եւ «անձնական տվյալների ապանձնավորում» հասկացություններից բխում է, որ հաստիքացուցակն առանց աշխատողների անվանացանկի եւ առանց աշխատողներին նույնականացնելու հանարավորության, ապանձնավորված ձեւով չի համարվի անձնական տվյալ (պարունակող): Այս դեպքում, երբ տվյալների մշակումն իրականացվում է ապանձնավորված, ապա «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի տեսանկյունից խնդրահարույց չէ: Ընդ որում, ապանձնավորմանը համադրելի է «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասի կանոնը, որի համաձայն՝ «2. Եթե պահանջվող տեղեկության մի մասը պարունակում է տվյալներ, որոնց տրամադրումը ենթակա է մերժման, ապա տեղեկություն է տրամադրվում մնացած մասի վերաբերյալ»:

Վերոնշյալը հաշվի առնելով Գործակալությունն արձանագրում է, որ **անձնական տվյալների պաշտպանությունը չի կարող պատրվակ հանդիսանալ ապանձնավորված եղանակով (ներառյալ՝ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասի կանոնին համապատասխան) տեղեկության տրամադրումը մերժելու համար:**

Այդուհանդերձ, սույն վարույթով քննարկման է ենթակա ՊՈԱԿ-ի հաստիքացուցակը եւ այդ հաստիքներում աշխատող անձանց անվանացանկը (հաստիքացուցակն անվանական) հրապարակելու կամ տեղեկություն ստանալու հարցման հիման վրա հարցմամբ դիմողին տրամադրելու իրավաչափությունը:

4.3. Սույն վարույթով անհրաժեշտ է պարզել՝ արդյո՞ք ՊՈԱԿ-ի կողմից անվանական հաստիքացուցակի հրապարակումը կամ տեղեկություն ստանալու հարցման հիման վրա հարցմամբ դիմողին տրամադրելը համարվում է անձնական տվյալների մշակում:

«Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ անձնական տվյալների մշակում է «անկախ իրականացման ձևից և եղանակից (այդ թվում՝ ավտոմատացված, տեխնիկական

ցանկացած միջոցներ կիրառելու կամ առանց դրանց) ցանկացած գործողություն կամ գործողությունների խումբ, որը կապված է անձնական տվյալները (...) փոխանցելու (...) հետ»: Նույն մասի 3-րդ կետի համաձայն՝ անձնական տվյալների փոխանցում է երրորդ անձանց «անձնական տվյալները որոշակի կամ անորոշ շրջանակի այլ անձանց փոխանցելուն կամ դրանց հետ ծանոթացնելուն ուղղված գործողություն, այդ թվում՝ զանգվածային լրատվության միջոցներով անձնական տվյալները հրապարակելը, տեղեկատվական հաղորդակցման ցանցերում տեղադրելը կամ այլ եղանակով անձնական տվյալներն այլ անձի մատչելի դարձնելը»:

Վերոնշյալից բխում է, որ ինչպես անձնական տվյալները հրապարակելը, այնպես էլ դրանք տեղեկատվական հաղորդակցման ցանցերում տեղադրելը, համացանցում (պաշտոնական կայքում) տեղադրելը, հարցման հիման վրա հարցմամբ դիմողին տրամադրելը համարվում է անձնական տվյալների փոխանցում: Ընդ որում, պետք է հաշվի առնել, որ սույն վարչական վարույթի հիմքում ընկած դիմումով «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունը տեղեկությունների հրապարակման դեպքում անձնական տվյալների մշակման իրավաչափության հարցը բարձրացրել է ոչ միայն հարցման հիման վրա ստանալու, այլ նաեւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված՝ ՊՈԱԿ-ի կողմից խնդրո առարկա տեղեկությունը սեփական նախաձեռնությամբ (պրոակտիվորեն) հրապարակելու համատեքստում: Ուստի, Գործակալությունը հարկ է համարում հստակեցնել, որ սույն վարույթի քննարկման առարկա է անձնական տվյալների փոխանցումը՝ որպես «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի իմաստով անձնական տվյալների մշակում, ինչը ներառում է ինչպես անձնական տվյալների հրապարակումը, այնպես էլ հարցման հիման վրա հարցմամբ դիմողին տրամադրումը:

Հետևաբար, ՊՈԱԿ-ի կողմից հաստիքացուցակն անվանական հրապարակելը կամ տեղեկություն ստանալու հարցման հիման վրա հարցմամբ դիմողին տրամադրելը «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի իմաստով անձնական տվյալների մշակում է:

4.4. Սույն վարույթով անհրաժեշտ է պարզել՝ արդյո՞ք ՊՈԱԿ-ն է տվյալ պարագայում անձնական տվյալներ մշակողը: «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ անձնական տվյալներ մշակող է «(...) պետական կամ համայնքային հիմնարկ կամ կազմակերպություն, (...) որը կազմակերպում և (կամ) իրականացնում է անձնական տվյալների մշակում»:

Հետեւաբար, ՊՈԱԿ-ի աշխատակիցների անձնական տվյալները մշակող է հանդիսանում ՊՈԱԿ-ը:

4.5. Սույն վարչական վարույթը հարուցվել է պարզելու համար ՊՈԱԿ-ի կողմից հաստիքացուցակը եւ այդ հաստիքներում ներգրավված անձանց անվանացանկը հրապարակելու կամ հարցման հիման վրա հարցմամբ դիմողին տրամադրելու (անձնական տվյալները երրորդ անձին փոխանցելու) դեպքում անձնական տվյալների մշակման համապատասխանությունն «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքին:

ՀՀ Սահմանադրության 34-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերի համաձայն՝ «1. Յուրաքանչյուր ոք ունի իրեն վերաբերող տվյալների պաշտպանության իրավունք: 2. Անձնական տվյալների մշակումը պետք է կատարվի բարեխղճորեն, օրենքով սահմանված նպատակով, անձի համաձայնությամբ կամ առանց այդ համաձայնության՝ օրենքով սահմանված այլ իրավաչափ հիմքի առկայությամբ»: Անձնական տվյալների պաշտպանության իրավունքն առարկայացել է «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքում, որի 8-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն «1. Անձնական տվյալներ մշակելը օրինական է, եթե՝ 1) տվյալները մշակվել են օրենքի պահանջների պահպանմամբ, և տվյալների սուբյեկտը տվել է իր համաձայնությունը, բացառությամբ սույն օրենքով կամ այլ օրենքներով ուղղակիորեն նախատեսված դեպքերի, 2) մշակվող տվյալները ձեռք են բերվել անձնական տվյալների հանրամատչելի աղբյուրներից»: Նույն օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «5. Առանց տվյալների սուբյեկտի համաձայնության անձնական տվյալներ կարող են մշակվել, եթե տվյալներ մշակելն ուղղակիորեն նախատեսված է օրենքով»:

Վերոնշյալից բխում է, որ անձնական տվյալների մշակումը կհամարվի օրինական, եթե մշակումն իրականացվի կամ անձնական տվյալի սուբյեկտի ***համաձայնությամբ***, կամ համաձայնության բացակայության դեպքում մշակումն ***ուղղակիորեն նախատեսված լինի օրենքով***, կամ տվյալները ձեռք բերվեն անձնական տվյալների ***հանրամատչելի աղբյուրներից***:

4.6. Հաշվի առնելով, որ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածը բլանկետային է, քանի որ անձնական տվյալների մշակման օրինականությունը պայմանավորում է այլ օրենքներով ուղղակիորեն նախատեսված լինելու հանգամանքով՝ Գործակալությունն ընդգծել, որ սույն վարույթով որոշում կայացնելու համար անհրաժեշտ է անդրադառնալ նաեւ աշխատողների անձնական տվյալների պաշտպանության վերաբերյալ ՀՀ աշխատանքային օրենսգրքի կարգավորումներին: Այսպես, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 134-րդ հոդվածի համաձայն՝ «Աշխատողի անձնական տվյալները փոխանցելիս գործատուն պարտավոր է պահպանել հետևյալ պահանջները. 1) աշխատողի անձնական տվյալները չհայտնել երրորդ անձանց՝ առանց աշխատողի գրավոր համաձայնության, բացառությամբ այն դեպքերի, երբ դա անհրաժեշտ է

աշխատողի կյանքին և առողջությանը սպառնացող վտանգը կանխելու համար, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ դեպքերում (...)»:

Վերոնշյալի համատեքստում Գործակալությունն արձանագրում է, որ մի կողմից ՀՀ աշխատանքային օրենսգիրքը «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի իմաստով այլ օրենք է, որով ուղղակիորեն նախատեսված են աշխատողի անձնական տվյալների մշակման (այլ անձանց փոխանցման) կանոններ, մյուս կողմից՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 134-րդ հոդվածի 3-րդ մասը նույնպես բլանկետային է, քանի որ աշխատողի անձնական տվյալների մշակման օրինականությունը համաձայնության բացակայության պայմաններում պայմանավորում է այլ օրենքներով:

4.7. ՀԿ-ի եւ ՊՈԱԿ-ի գրագրությունը (հարցումները եւ դրանց պատասխանները) վկայում են, որ խնդրո առարկա հարցը մեծապես գտնվում է տեղեկատվության ազատության ոլորտում: Ուստի, սույն վարույթով որոշում կայացնելու համար անհրաժեշտ է անդրադառնալ նաեւ տեղեկատվության ազատության վերաբերյալ օրենսդրությանը եւ պատասխանել հետեւյալ հարցին՝ արդյո՞ք հաստիքացուցակը եւ այդ հաստիքներում ներգրավված անձանց անվանացանկն առանց այդ անձանց համաձայնության ՊՈԱԿ-ի կողմից հրապարակելը (հրապարակելու պարտականությունը) նախատեսված է օրենքով:

Այսպես, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն է ի թիվս այլնի նաեւ անձի վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված կարգով ստացված և ձևավորված տվյալը: Նույն հոդվածի համաձայն՝ տեղեկություն տնօրինող են տեղեկություններ ունեցող պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, պետական հիմնարկները, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունները, ինչպես նաև հանրային նշանակության կազմակերպությունները և դրանց պաշտոնատար անձինք:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է տեղեկություն տնօրինողի կողմից սեփական նախաձեռնությամբ տարին առնվազն մեկ անգամ հրապարակվող տեղեկությունների ցանկն՝ ի թիվս այլնի 4-րդ կետով նշելով նաեւ հաստիքացուցակները, ինչպես նաև պաշտոնատար անձանց անունները, ազգանունները, կրթությունը, մասնագիտությունը, պաշտոնը, աշխատանքի վայրի հեռախոսային համարները, էլեկտրոնային փոստի հասցեները հրապարակելու պարտականությունը: Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ «6. Հանրային նշանակության, ինչպես նաև բյուջեից հատկացում (ֆինանսավորում) ստացող կազմակերպությունները կարող են չհրապարակել սույն հոդվածի 3-րդ մասի (...) 4-րդ (...) կետերում սահմանված տեղեկությունները և դրանց փոփոխությունները»:

Այսպիսով, **«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքն ուղղակիորեն անձնական տվյալների մշակում նախատեսող օրենք է, իսկ նույն**

օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետն ուղղակիորեն անձնական տվյալների մշակում նախատեսող նորմ է: Միաժամանակ Գործակալությունն արձանագրում է, որ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 6-րդ մասը հանրային նշանակության, ինչպես նաեւ բյուջեից հատկացում (ֆինանսավորում) ստացող կազմակերպությունների համար սահմանում է բացառություն՝ հնարավորություն չհրապարակել նույն հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով սահմանված տեղեկությունները:

Հաշվի առնելով ՊՈԱԿ-ի այն դիրքորոշումը, որ ՊՈԱԿ-ը պատկանում է «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 6-րդ կետում նշված կազմակերպությունների ցանկին, եւ ՀԿ-ի այն դիրքորոշումը, որ ՊՈԱԿ-ը պետական հիմնարկ (կազմակերպություն) է, այլ ոչ թե բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպություն՝ Գործակալությունն արձանագրում է, որ սույն կետի 1-ին պարբերությունում բարձրացված հարցի պատասխանը հանգում է հետեւյալին՝ արդյո՞ք ՊՈԱԿ-ը պատկանում է «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 6-րդ կետում նշված կազմակերպությունների ցանկին եւ չունի խնդրո առարկա անձնական տվյալները հրապարակելու պարտականություն, թե՞ չի պատկանում եւ նույն հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետի ուժով ունի խնդրո առարկա անձնական տվյալները հրապարակելու պարտականություն:

4.8. Այսպես, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ հանրային նշանակության կազմակերպություններ են ապրանքային շուկայում մենաշնորհ կամ գերիշխող դիրք ունեցող, ինչպես նաև առողջապահության, սպորտի, կրթության, մշակույթի, սոցիալական ապահովության, տրանսպորտի և կապի, կոմունալ ոլորտներում հանրությանը ծառայություններ մատուցող ոչ պետական կազմակերպություններ: Գործակալությունն արձանագրում է, որ **ՊՈԱԿ-ը հանրային նշանակության կազմակերպություն չէ:**

4.9. Ինչ վերաբերում է ՊՈԱԿ-ի՝ բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպություն լինելուն, ապա պետք է նշել, որ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը չի սահմանում բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպության հասկացությունը: Բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպության հասկացությունն հնարավոր չի եղել գտնել նաեւ այլ օրենքներում: Տեղեկատվության ազատության ոլորտում քննված դատական գործերում նույնպես հնարավոր չի եղել գտնել բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպության հասկացությունը. դատական միակ գործը, որտեղ քննարկվում է տեղեկություն տնօրինողի՝ բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպություն լինելու հարցը, «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունն ընդդեմ «Փարքինգ Սիթի Սերվիս» ՓԲԸ-ի թիվ ՎԴ/0015/05/14

վարչական գործն է, որի շրջանակներում քննարկվել է ՓԲԸ-ի պատկանելությունը տեղեկություն տնօրինողներին, ինչն ինքնին կիրառելի չէ ՊՈԱԿ-ի դեպքում:

Միաժամանակ, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքը սահմանում է պետական ոչ առևտրային կազմակերպությունների իրավական վիճակը, դրանց ստեղծման, գործունեության, վերակազմակերպման և լուծարման կարգը, ինչպես նաև պետական մարմինների հետ փոխհարաբերությունները, սահմանում է պետական ոչ առեւտրային կազամակերպության հասկացությունը (3-րդ հոդվածի 1-ին մաս): Պետական ոչ առեւտրային կազմակերպության ենթակայությանն անդրադառնում է, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» ՀՀ օրենքը՝ սահմանելով, որ պետական մարմնի, ենթակա պետական մարմնի ենթակայությանը (4-րդ հոդվածի 4-րդ մաս), պետական մարմնի աշխատակազմի ենթակայությանը (15-րդ հոդվածի 10-րդ մաս) կարող են հանձնվել պետական ոչ առևտրային կազմակերպություններ, «Պետական կառավարչական հիմնարկների մասին» ՀՀ օրենքը՝ սահմանելով, որ հիմնարկի ենթակայությանը կարող են հանձնվել պետական (համայնքային) ոչ առևտրային կազմակերպություններ (9-րդ հոդվածի 6-րդ մաս): Նշված օրենքները նույնպես չեն պարունակում որեւէ նշում ՊՈԱԿ-ի՝ բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպություն լինելու մասին, փոխարենը որոշակի տեղեկություն են տալիս պետական ոչ առեւտրային կազմակերպության բնույթի մասին:

ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածի դոկտրինալ մեկնաբանությունների համաձայն՝ «(...): Իրավունքի գերակայության սկզբունքի գործնական նշանակությունը պետական մարմինների եւ պաշտոնատար անձանց իրավակիրառ գործունեության ընթացքում առավել ցայտուն արտահայտվում է այն դեպքերում, երբ պոզիտիվ իրավունքի համակարգում տեղ են գտնում բացեր, հակասություններ եւ անորոշ դրույթներ: Այդ բացերը հաղթահարելու, հակասությունները լուծելու եւ անորոշ դրույթները մեկնաբանելու ընթացքում պետական մարմինները եւ պաշտոնատար անձինք պետք է ղեկավարվեն բնական իրավունքի հիմնադրույթներով:» (ՀՀ Սահմանադրության գիտագործնական մեկնաբանությունների ժողովածու, 2010թ., էջ 45):

Վերոնշյալն ընդունելով որպես չափանիշ եւ հաշվի առնելով ներպետական օրեսդրությունում բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպության հասկացության բացակայությունը՝ Գործակալությունը գտնում է, որ ՊՈԱԿ-ի պատկանելությունը բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպություններին պետք է պարզել եւ ըստ այդմ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով սահմանված հասկացությունները պետք է մեկնաբանել՝ ելնելով տեղեկատվության ազատության սահմանադրական իրավունքի էությունից, հանրային կառավարման հրապարակայնության եւ թափանցիկության սկզբունքներից:

Այսպես, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպություններից բացի տեղեկություն տնօրինող են նաեւ տեղեկություններ ունեցող

- պետական մարմինները,
- տեղական ինքնակառավարման մարմինները,
- պետական հիմնարկները,
- հանրային նշանակության կազմակերպությունները,
- պաշտոնատար անձինք:

Ընդ որում փաստ է, որ պետական մարմինները, տեղական ինքնակառավարման մարմինները, պետական հիմնարկները նույնպես ֆինանսավորվում են բյուջեներից: Հետեւաբար, եթե ընդունենք, որ պետական ոչ առեւտրային կազմակերպությունը, անկախ իր ենթակայությունից եւ պետական բնույթից, միայն բյուջեներից ֆինանսավորվելու ուժով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի իմաստով ստանում է բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպության կարգավիճակ, ապա նմանապես բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպության կարգավիճակ են ստանում նաեւ պետական մարմինները, տեղական ինքնակառավարման մարմինները եւ պետական հիմնարկները:

Նման մեկնաբանության դեպքում անհասկանալի կլինի, թե ինչու է օրենսդիրն տեղեկություն տնօրինողների նման ցանկ սահմանել եւ միեւնույն՝ բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպության կարգավիճակն ունեցողներին տարբեր անվանումներ տվել: Ուստի, նման մեկնաբանությունը խնդրահարույց է:

Բացի այդ, նման մեկնաբանության պարագայում կստացվի, որ պետական մարմինները, տեղական ինքնակառավարման մարմինները եւ պետական հիմնարկները նույնպես կարող են վկայակոչել բյուջեներից ֆինանսավորվելու հանգամանքը եւ պնդել, որ պատկանում են «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 6-րդ կետում նշված կազմակերպությունների ցանկին եւ չունեն նույն հոդվածի 3-րդ մասի 2-րդ, 4-րդ և 5-րդ կետերում սահմանված տեղեկությունները հրապարակելու պարտականություն: Նման պարագայում հաշվի առնելով, որ հանրային նշանակության կազմակերպությունները նույնպես պատկանում են 7-րդ հոդվածի 6-րդ կետում նշված կազմակերպությունների ցանկին՝ 7-րդ հոդվածի 3-րդ մասն առարկայազուրկ եւ անիմաստ կդառնա: Սա եւս մեկ անգամ վկայում է, որ, նման մեկնաբանությունը խնդրահարույց է:

Վերոնշյալի համատեքստում Գործակալությունը գտնում է, որ անհնար է պատկերացնել, որ օրենսդիրը բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպության շրջանակներում նկատի է ունեցել բյուջեներից փաստացի ֆինանսավորվող բոլոր մարմիններին, այդ թվում՝ տեղեկություն տնօրինողների ցանկում ներառված պետական մարմիններին, տեղական ինքնակառավարման մարմիններին եւ

պետական հիմնարկներին: Նման պարագայում հաշվի առնելով նաեւ սույն կետում նշված իրավական ակտերի դրույթները՝ Գործակալությունը հանգում է այն եզրակացության, որ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածում տեղեկություն տնօրինողի հասկացության շրջանակում նշված բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպության հասկացությունը վերաբերում է բյուջեներից հատկացում (ֆինանսավորում) ստացող **ոչ պետական (մասնավոր)** կազմակերպություններին, իսկ պետական կազմակերպություններն այս կամ այն կերպ արդեն իսկ ներառված են պետական մարմինների կամ պետական հիմնարկների կազմում: Ուստի, Գործակալությունը գտնում է, որ **ՊՈԱԿ-ը «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի իմաստով բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպություն չէ:**

Վերոնշյալը հաշվի առնելով՝ Գործակալությունը գտնում է, որ **ՊՈԱԿ-ը չի պատկանում «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 6-րդ կետում նշված կազմակերպությունների ցանկին եւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված բացառությունը ՊՈԱԿ-ին վերաբերելի չէ:**

4.10. Գործակալությունը գտնում է, որ **այն տեղեկությունը, որը ենթակա է հրապարակման (հրապարակվել է), ենթակա է նաեւ հարցման հիման վրա հարցմամբ դիմողին տրամադրման:**

Այսպես, ՀՀ վարչական դատարանը թիվ ՎԴ/4141/05/11 վարչական գործով[1] դիրքորոշում է հայտնել, որ այն տեղեկությունը, որը երրորդ անձինք օրինական հիմքերով ազատորեն ստանալու հնարավորություն ունեն, այլեւս չի կարող համարվել որեւէ գաղտնիք (մեջբերում՝ «(…) առարկայազուրկ են (…) այն պնդումները, որ /տեղեկությունը/ (…) հանդիսանում է (…) գաղտնիք, քանի որ սույն տեղեկատվությունը երրորդ անձինք օրինական հիմքերով այն ազատորեն ստանալու հնարավորություն ունեն (…)»): Ընդ որում, այս չափանիշը վերաբերում է նաեւ անձնական տվյալներին եւ համադրելի է հանրամատչելի անձնական տվյալների հետ, քանի որ ըստ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի՝ հանրամատչելի աղբյուրներից ձեռք բերված անձնական տվյալների մշակումն օրինական է:

4.11. Ամբողջ վերանշյալը հաշվի առնելով՝ Գործակալությունը գտնում է, որ ՀՀ առողջապահության նախարարության դատաբժշկական գիտագործնական կենտրոնի Շիրակի մարզի դատաբժշկական փորձաքննությունների բաժնի 2014 չորրորդ եռամսյակի (հոկտեմբերի 1-ից-դեկտեմբերի 31-ը) հաստիքացուցակը եւ այդ հաստիքներում ներգրավված անձանց անվանացանկը «Դատաբժշկական

[1] Տես՝ http://datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809524518

գիտագործնական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետին համապատասխան հրապարակելը կամ հարցման հիման վրա հարցմամբ դիմողին տրամադրելը **չի հակասում «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքին:**

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ մասով.

ՈՐՈՇԵՑԻ

1. «Դատաբժշկական գիտագործնական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից հաստիքացուցակները եւ աշխատակիցների ցանկը (այդ թվում՝ ՀՀ առողջապահության նախարարության դատաբժշկական գիտագործնական կենտրոնի Շիրակի մարզի դատաբժշկական փորձաքննությունների բաժնի 2014 չորրորդ եռամսյակի (հոկտեմբերի 1-ից-դեկտեմբերի 31-ը)) «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետին համապատասխան հրապարակելը կամ հարցման հիման վրա հարցմամբ դիմողին տրամադրելը չի հակասում «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարույթի մասնակիցներին այն հանձնելու հաջորդող օրվանից և օրենքով սահմանված կարգով և ժամկետում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

ՀՀ ԱՆ ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԵՏ
ԳԵՎՈՐԳ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ